ԳԴ3/0075/01/23
(ՀԿԴ2/0030/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 փետրվարի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս ուսումնասիրելով թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հունվարի 31-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի օգոստոսի 23-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 457-րդ հոդվածի 2-րդ մասով և Լևոն Աշոտի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի

3-րդ կետով, 457-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 50142723 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի օգոստոսի 25-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0243/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի օգոստոսի 30-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը, 2023 թվականի դեկտեմբերի 14-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

2. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 31-ին որոշում է կայացրել թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 12-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա աշխատելով «Հայփոստ» ՓԲ ընկերությունում և իրականացնելով նաև «Հայփոստ» ՓԲ ընկերության փոստային բաժանմունք առաքված ընտանեկան նպաստի գումարները ստորագրությամբ նպաստառուների ցուցակում ընդգրկված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղերում բնակվող նպաստառուներին հանձնելու գործառույթ, 2008 թվականից մինչև 2018 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում օժանդակել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սոցիալական*

աջակցության Վարդենիսի տարածքային գործակալության պետ Արամ Ռոբերտի Հարությունյանի, նույն գործակալության առաջին կարգի մասնագետ, այնուհետև գլխավոր մասնագետ Ներսես Մովսեսի Թովմասյանի և նույն գործակալության առաջին կարգի մասնագետ Արտեմ Հրաչիկի Խաչատրյանի կողմից իմքով հանցանքի կատարմանը:

Այսպես. Մարտիրոս Լեռնիկի Եղիազարյանն ունենալով վերոնշյալ գործառույթը Գեղարքունիքի մարզի, Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղերում բնակվող բնակիչների անվամբ կեղծ փվյալների ընդգրկմամբ ապօրինի ձևակերպված և յուրաքանչյուր ամիս պետական միջոցներից պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած կազմակերպություն հանդիսացող «Հայփոստ» ՓԲ ընկերության փոստային բաժանմունք առաքված ընտանեկան նպաստի գումարները հափշտակելու հարցում Արամ Հարությունյանին, Արտեմ Խաչատրյանին և Ներսես Թովմասյանին օժանդակելու, այն է՝ փոստային բաժանմունք վերադարձված գումարները հիշյալ անձանց տրամադրությանը հանձնելու խոչընդոտը վերացնելով և կատարվող հանցագործությունը թաքցնելու նպատակով հանցավոր համաձայնության է եկել վերջիններիս հետ և իրենց հանցավոր գործողություններն իրագործելու նպատակով կեղծ փվյալների ընդգրկման արդյունքում «Հայփոստ» ՓԲ ընկերության՝ իր կողմից սպասարկված փոստային բաժանմունք ստացված և իր մոտ գտնված գումարները հանձնել է Ներսես Թովմասյանին, իսկ ստացված գումարներն իբրև նպաստառուներին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու և հանցավոր գործողությունները թաքցնելու նպատակով, հիշյալ նպաստառուների անվան դիմաց ստորագրություն կատարելու համար կեղծ փվյաներ պարունակող ցուցակները հանձնել է Ներսես Թովմասյանին, որից հետո նրա կողմից իրեն փոխանցված և արդեն կեղծ անվամբ անձանց դիմաց ստորագրություններ պարունակող, իր մոտ գումար լինելու պատրանքն ստեղծող կեղծ փաստաթուղթ հանդիսացող ցուցակները դրել է շրջանառության մեջ և այդ կերպ՝ իմքի կազմում օգտագործել դրանք, հաստատելով, թե իբրև իրականում գոյություն չունեցող նպաստառուներն

են ստացել իրենց անվամբ հատկացված նպաստի գումարները, որի արդյունքում Արամ Ռոբերտի Հարությունյանը, Ներսես Մովսեսի Թովմասյանը և Արտեմ Հրաչիկի Խաչատրյանը՝ Մարտիրոս Լեռնիկի Եղիազարյանի օժանդակությամբ, մեկ միասնական դիտավորությամբ խաբեության եղանակով հափշտակել են առանձնապես խոշոր չափի գումար (…)»[1]*:*

2023 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Լևոն Աշոտի Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա աշխատելով «Հայփոստ» ՓԲ ընկերությունում և իրականացնելով նաև «Հայփոստ» ՓԲ ընկերության փոստային բաժանմունք առաքված ընտանեկան նպաստի գումարները ստորագրությամբ նպաստառուների ցուցակում ընդգրկված Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղերում բնակվող նպաստառուներին հանձնելու գործառույթ, 2015 թվականի փետրվարի 23-ից մինչև 2018 թվականի հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում օժանդակել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության Վարդենիսի տարածքային գործակալության պետ Արամ Ռոբերտի Հարությունյանի, նույն գործակալության առաջին կարգի մասնագետ, այնուհետև գլխավոր մասնագետ Ներսես Մովսեսի Թովմասյանի և նույն գործակալության առաջին կարգի մասնագետ Արտեմ Հրաչիկի Խաչատրյանի կողմից խմբով հանցանքի կատարմանը:*

Այսպես. Լևոն Աշոտի Խաչատրյանն ունենալով վերոնշյալ գործառույթը Գեղարքունիքի մարզի, Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղերում բնակվող բնակիչների անվամբ կեղծ տվյալների ընդգրկմամբ ապօրինի ձևակերպված և յուրաքանչյուր ամիս պետական միջոցներից պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած կազմակերպություն հանդիսացող «Հայփոստ» ՓԲ ընկերության փոստային բաժանմունք առաքված ընտանեկան նպաստի գումարները հափշտակելու հարցում

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 31, թերթեր 120-123:

Արամ Հարությունյանին, Արտեմ Խաչատրյանին և Ներսես Թովմասյանին օժանդակելու, այն է՝ փոստային բաժանմունք վերադարձված գումարները հիշյալ անձանց տրամադրությանը հանձնելու խոչընդոտը վերացնելով և կատարվող հանցագործությունը թաքցնելու նպատակով հանցավոր համաձայնության է եկել վերջիններիս հետ և իրենց հանցավոր գործողություններն իրագործելու նպատակով կեղծ փվյալների ընդգրկման արդյունքում «Հայփոստ» ՓԲ ընկերության՝ իր կողմից սպասարկված փոստային բաժանմունք ուղարկված և իր մոտ գտնված գումարները հանձնել է Արտեմ Խաչատրյանին, իսկ ուղարկված գումարներն իբրև նպաստառուներին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու և հանցավոր գործողությունները թաքցնելու նպատակով, հիշյալ նպաստառուների անվան դիմաց ստորագրություն կատարելու համար կեղծ փվյաներ պարունակող ցուցակները հանձնել է Արտեմ Խաչատրյանին, որից հետո նրա կողմից իրեն փոխանցված և արդեն կեղծ անվամբ անձանց դիմաց ստորագրություններ պարունակող, իր մոտ գումար լինելու պատասխանատվությունից ազատող կեղծ փաստաթուղթ հանդիսացող ցուցակները դրել է շրջանառության մեջ և այդ կերպ՝ խմբի կազմում օգտագործել դրանք, հաստատելով, թե իբրև իրականում գոյություն չունեցող նպաստառուներն են ստացել իրենց անվամբ հատկացված նպաստի գումարները, որի արդյունքում Արամ Ռոբերտի Հարությունյանը, Ներսես Մովսեսի Թովմասյանը և Արտեմ Հրաչիկի Խաչատրյանը՝ Լևոն Աշոտի Խաչատրյանի օժանդակությամբ, մեկ միասնական դիտավորությամբ խաբեության եղանակով հափշտակել են առանձնապես խոշոր չափի գումար: (…)»[2]:

5. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 6-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի մեջ ներառված չէ՝*

- 178-րդ հոդվածի 3-րդ մասը, եթե այն չի կատարվել պաշտոնեական դիրքն օգտագործելով.

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 31, թերթեր 116-119:

- 325-րդ հոդվածը

4. 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկի մեջ ներառված չէ՝

- 255-րդ հոդվածի 3-րդ մասը, եթե այն չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.

- 457-րդ հոդվածը:

Դատարանը, վերոգրյալ իրավական նորմերի, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով գործի նյութերը, (...) արձանագրում է, որ մեղադրյալներ՝ Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանին և Լևոն Աշոտի Խաչատրյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրության մեջ բացակայում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով սահմանված «պաշտոնեական դիրքն օգտագործել»-ու, ինչպես նաև 2022թ-ի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործել»-ու եղանակով ուրիշի գույքը խարդախությամբ հափշտակելուն օժանդակելով ենթադրյալ հանցակազմի նկարագրություն, ինչպես նաև այն, որ մեղադրյալներին մեղսագրված 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածը, որը համապատասխանում է 2022թ-ի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածին, չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանքներ, բացի այդ նկատի ունենալով, որ մեղադրյալներին մեղսագրված ենթադրաբար կատարված հանցանքները կատարվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, ուստի Դատարանը գտնում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի վարույթում քննվող թիվ ՀԿԴ2/0030/01/23

քրեական վարույթը ըստ ընդդատության պետք է ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[3]:

6. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 31-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, քննարկելով հանրային մեղադրողի միջնորդությունը, հետազոտելով քրեական վարույթի որոշ նյութեր, հանգում է այն հետևության, որ թիվ ԳԴ3/0075/01/23 քրեական վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին հետևյալ պատճառաբանությամբ.*

(…) [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի] պահանջի մեկնաբանության արդյունքում կարելի է ողջամիտ հետևության հանգել, որ ՀՀ Հակակոռուպցիոն դատարանը, առաջին հայացքից, ձևական առումով, ճիշտ որոշում է կայացրել Մարտիրոս Եղիազարյանի և Լևոն Խաչատրյանի վերաբերյալ թիվ 31154018 քրեական վարույթը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ըստ առարկայական ընդդատության ուղարկելու վերաբերյալ, քանի որ մեղադրյալ Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի նկատմամբ քրեական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից նոր հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում էր 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին և նույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասին), իսկ մեղադրյալ Լևոն Խաչատրյանի նկատմամբ նոր հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում էր 2003թ.-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար՝ 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին և նույն օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասին), որոնք ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկում:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 32, թերթեր 81-82:

Մինչդեռ, բովանդակային առումով, դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում ՀՀ հակակոռուպցիոն դատարանի որոշման հետ հետևյալ հիմնավորումներով.

Այսպես.

Մեղադրյալներ Լևոն Խաչատրյանի և Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ վերջիններս օժանդակել են Արամ Հարությունյանին, Արտեմ Խաչատրյանին և Ներսես Թովմասյանին պետությունից հափշտակել առանձնապես խոշոր չափերի գումար:

Արամ Հարությունյանի, Արտեմ Խաչատրյանի և Ներսես Թովմասյանի վերաբերյալ քրեական գործը գտնվում է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում (ՀԿԴ2/0016/01/22):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մեկ վարույթում կարող են միացվել՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված մեկից ավելի ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթները՝ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով:

Դատարանը գտնում է, որ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալներ Լևոն Խաչատրյանի և Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի վերաբերյալ քրեական գործը պետք է միացվի մեղադրյալներ Արամ Հարությունյանի, Արտեմ Խաչատրյանի և Ներսես Թովմասյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0016/01/22 քրեական վարույթին, քանի որ դրանք փաստական հանգամանքներով փոխկապված են մեկը մյուսի հետ և կազմում են մեկ ամբողջություն:

Հարկ է փաստել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը կարգավորում է նույն դատարանի մեկից ավելի դատավորների մոտ գտնվող վարույթները միացնելու հարցը, սակայն օրենսգրքով առկա չէ որևէ կարգավորում, թե ինչ ընթացակարգով են միացվում տարբեր դատարանների վարույթներում գտնվող քրեական գործերը:

Դատարանի համոզմամբ նշված հարցը ենթակա է քննարկման առարկայական ընդդատության կանոններով, քանի որ փաստ է, որ մեղադրյալներ Լևոն Խաչատրյանի և Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի վերաբերյալ քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0016/01/22 քրեական գործի մաս է կազմում: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը:

Հարկ է փաստել նաև, որ թիվ ԳԴ3/0075/01/23 և ՀԿԴ2/0016/01/22 քրեական գործերը իրարից անջատ քննվելու պարագայում չի բացառվում, որ հնարավոր է ստեղծվի մի իրավիճակ, երբ նույն փաստական հանգամանքներով կկայացվեն իրար հակասող երկու եզրափակիչ դատական ակտ, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անորոշության:

Դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա» (տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Walchli v. France գործով 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ):

Ամփոփելով վերոնշյալը և հիմք ընդունելով այն, որ մեղադրյալներ Լևոն Խաչատրյանի և Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից քննվելու պարագայում իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա, գտնում եմ, որ թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական գործն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (…)»[4]:

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 32, թերթեր 137-139:

7. 2022 թվականի սեպտեմբերի 27-ին Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել Արամ Ռոբերտի Հարությունյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և երկու դրվագ՝ 308-րդ հոդվածի 1-ին մասով, Արտեմ Հրաչիկի Խաչատրյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Ներսես Մովսեսի Թովմասյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ՀԿԴ2/0016/01/22 քրեական գործը վարույթ ընդունելու մասին[5]:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

Մինչև սույն վարույթով բարձրացված իրավական հարցին անդրադառնալը, հարկ է նշել, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, սույն որոշման կայացման օրվա դրությամբ, ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-32-Ն ՀՀ օրենքը՝ համաձայն որի, վարույթի առարկայական ընդդատության հարցը վերջնականապես լուծում են Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները, ուստի ընդդատության մասին հարցը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի նախագահի, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների կողմից:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

[5] Տե՛ս www.datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, թիվ ՀԿԴ2/0016/01/22 քրեական գործը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության*

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ինսպիրուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[8]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1.Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ուղարկված հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նոտրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության

հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին՝ փաստելով, որ Մ.Եղիազարյանին և Լ.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով ներկայացված մեղադրանքներում բացակայում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 6 հավելվածով սահմանված՝ «պաշտոնեական դիրքն օգտագործելու», ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու» հատկանիշը:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է նաև, որ մեղադրյալներ Մ.Եղիազարյանին և Լ.Խաչատրյանին ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածով մեղսագրված ենթադրյալ հանցանքները նույնպես չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի[9]:

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ Մ.Եղիազարյանը և Լ.Խաչատրյանն ենթադրաբար օժանդակել են Արամ Հարությունյանին, Արտեմ Խաչատրյանին և Ներսես Թովմասյանին՝ պետությունից առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելուն, որոնց վերաբերյալ քրեական գործը գտնվում է Հակակոռուպցիոն դատարանում, գտել է, որ պատշաճ և համակողմանի քննություն ապահովելու նպատակով, ելնելով արդարադատության շահից, մեղադրյալներ Մ.Եղիազարյանի և Լ.Խաչատրյանի վերաբերյալ քրեական վարույթը պետք է միացվի մեղադրյալներ Ա.Հարությունյանի, Ա.Խաչատրյանի և Ն.Թովմասյանի վերաբերյալ

[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Հակակոռուպցիոն դատարանում քննվող թիվ ՀԿԴ2/0016/01/22 քրեական վարույթին, քանի որ դրանք փաստական հանգամանքներով փոխկապված են մեկը մյուսի հետ և կազմում են մեկ ամբողջություն[10]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Մ.Եղիազարյանի և Լ.Խաչատրյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների բովանդակությունից հետևում է, որ Մ.Եղիազարյանը և Լ.Խաչատրյանը ենթադրաբար օժանդակել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Վարդենիսի տարածքային գործակալության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց՝ Արամ Հարությունյանի, Ներսես Թովմասյանի և Արտեմ Խաչատրյանի կողմից ենթադրաբար ***«պաշտոնեական դիրքն օգտագործելով»*** պետությունից խաբեության եղանակով խոշոր չափերի գումարի հափշտակությանը, որը, համաձայն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» N 6 հավելվածի, հանդիսանում է կոռուպցիոն հանցագործություն: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը: Հակառակ մոտեցումը կլինի խիստ ձևականացված և կարող է իր ազդեցությունն ունենալ վարույթի արդարացիության վրա:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման անհրաժեշտությունից՝ գտնում ենք, որ թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

---

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Մարտիրոս Լեոնիկի Եղիազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով և Լևոն Աշոտի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԳԴ3/0075/01/23 (ՀԿԴ2/0030/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ